

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ

20-ՐԴ ՏԱՐԻ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱՆԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մերը կը ստանանք սեփական շնորհակալութեամբ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՐԱԳՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիայի տանը).
Կայսերական ռուբլի քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպեկ.
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ կեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանի լրագրիչների յայտարարութիւնները, մահացուցանիքներ և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցանիք տպագրելու առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քսան երեսի վրա՝ 2 ռուբլի:
Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ОТЪ ОСОБАГО КОМИТЕТА,

состоящего подъ предсѣдательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича.

Денежныя пожертвованія, предоставляемыя въ распоряженіе состоящаго подъ предсѣдательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича Особаго Комитета для помощи нуждающимся въ мѣстностяхъ, постигнутыхъ неурожаемъ, а также заимствованія о желаніи жертвовать въ пользу нуждающихся хлѣбомъ (зерномъ и мукою) принимаются въ помѣщеніи Кабинета Его Императорскаго Величества, у Аничкова моста, отъ 10 час. утра до 2 час. дня, ежедневно, за исключеніемъ дней неприсутственныхъ. Пожертвованія отъ иногородныхъ слѣдуетъ адресовать: въ С.-Петербургъ, въ Особый Комитетъ, состоящій подъ предсѣдательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича.

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան գիւղերուական հասարակեան դատարանում. Նամակ երեսնից. Նամակ Ներքին-Ախտայից. Նամակ Խմբագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կայսերական ռուբլի քաղաքներից. Պատրիարքական կոնգրես. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՐԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՏԵՂԵԿԱՅՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԵՆՈՒՈՐԱԿԱՆ-ՆԱԶԱՆԳԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 9-ին Կովկասեան գիւղերուական հասարակեան դատարանում քննվեց երեսնեան գնդի փոխ-գնդապետ Փիլաղովի գործը, որը մեղադրվում էր թէ նախամտածված մտադրութեամբ պահանջ նոյն գնդի պորուչիկ Նեկրասովին, հոկտեմբերի 7-ին ներկայ 1891 թիւին, Մանգլիս ամառանում:

Փիլաղովին պաշտպանում էր երրուեալ հաւատարմաւոր Գաբրիել Տեր-Ստեփանով: Մեղադրվածը չէ ուրանում սպանութեան իրողութիւնը, բայց յայտնում է, որ կապակեւծվել է իր կինը Երային յարաբերութիւններ ունի պորուչիկ Նեկրասովին հետ, նա երկար ժամանակ տանջվելով այդ մտքով, վերջապէս հոկտեմբերի 7-ին ամառանակ արձակեց Նեկրասովին վրա, գրգռված դրութեան մէջ, առանց նոյն իսկ կշռելու և

հասկանալու իր սեփական արածը: Յովսէփ Փիլաղով հայ է և 40 տարեկան մարդ է, ունի չորս երեխաներ: Մեղադրվածի կինը վկայում է, որ ինքն ծանօթ էր Նեկրասովին հետ, սակայն սիրաւոր յարաբերութիւններ չէ ունեցել նրա հետ և նոյն իսկ զորանք էր զգում դէպի հանգուցեալը:

Գատարանը գործը քննելուց և պաշտպանի ճառը լսելուց յետոյ, որոշեց, ճանաչելով Փիլաղովի կատարած սպանութիւնը ոչ նախամտածված մտադրութեան, այլ բռնական գրգռման արդիւնք, դատաւարտել նրան գիւղերական ծառայութիւնից հրաժարեցնելուն, աղնական կոչում մից, աստիճաններից, պատանաշաններից և արտոնութիւններից զրկելուն, և աքսորել Սիբիրի Նիխնեան նահանգը, կեցութեան համար, երկու տարով, արգելելով նրան այնտեղ 8 տարի շարունակ հեռանալ Սիբիրից: Գատարանը որոշեց ներկայացնել իր կայացրած վճիռը Բարձրագոյն հայեցողութեան:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 4-ին

Անկոչ հիւրը՝ ինֆլուէնցան, բարեհաճել է մեզ էլ այցելելու: Բայց մենք նրան չէինք նկատել միմյանի երբ վերջերումս սկսեց գործել անկի ջերմեանը, նոր նկատեցինք նրա ներկայութիւնը: Նրա հետ այս բաւական չէ: Դիֆտերիան էլ միւս կողմից է սկսել գործել, այնպէս որ այս երկու անկոչ հիւրերը ձեռք ձեռքի տուած, առաջ են գնում բոլորովին անարգել: Սրանք դեռ ևս հիւրասիրութեամբ են հասարակ տներում, իսկ երբ կը

համեն ինտելիգենտ դատակարգին, գոցեց նոր կը սկսեն նրանց առաջն առնելու միջոցներ գործ դնել:

Այս հիւանդութիւնների երեւոյթ չբաղադրային խորհրդարանը՝ դեռ ևս չէ նկատել: Նրան կարծում են, որ արտաքննողները և առհասարակ կեղծը հարկաւոր չէ մաքրել տալը, որովհետեւ այսօր կամ վաղը ձիւն կը գայ և կը ծածկի բոլորը: Նրանցից, ինչու էք լուռ. եթէ հետաքրքրվէք այդ հիւանդութիւններով, կը տեսնէք, որ մենք և փոքր զոր են գնում դրանց, գործ դրեցէք հիւանդութիւններին առաջն առնելու գոնէ ամենահասարակ միջոցը՝ կարբոնան թթուն, կամ ուրիշ դեղինֆեկցիական ամենատարրական միջոց: Հարցրէք, դիմեցէք բժիշկներին գոնէ... Մի՞թէ կոպէկներն էք խնայում: Եթէ ամբողջ քաղաքի համար չէք կարող հոգալ, գոնէ հոգացէք ձեզ և ձեր ընտանիքների համար:

Ամեն ժամանակ քնած մնալը լաւ չէ, որովհետեւ լինում են դէպքեր, երբ քնողները ընդ միշտ են քնում: Նրեք օրվայ ընթացքում՝ 18 հոգի զոհ են եղած այդ ակտիւնին, չը պէտք է թողած որ դանակը ոսկորին հասնէ և մեր առջև նորից ներկայանայ 1888 թիւը:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՌԱՋԻՑ

Դեկտեմբերի 2-ին

Այսօրից երեք վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Նոր-Քաղսի հայ գիւղը, որը դեռ 4—5 տարի է, ինչ հիմնվել է: Այդ գիւղը, որը ընկած է երեւան տանող խճուղու հարթութեան վրա, ունի 30 տուն բնակիչ միայն, որոնց գլխաւոր պարագմունքն է հողագործութիւն և անասնապահութիւն: Այդ Նոր-Քաղսիի ժողովուրդը կազմում է Հին-Քաղսի գիւղի մի մասը և 4—5 տարի առաջ ցանկութիւն ունենալով զուրս գալ Հին-Քաղսիից, որը ընկած է 1/2 վերստ հեռաւորութեամբ, մի ձորափորում, Հրազդան գետի եզրերում, բաժանվեց իր համագիւղացիներից և դուրս գալով հին գիւղից, սկսեց նոր տներ կառուցանել արբունական ճանապարհի վրա, սաստիկ տառութեան ծնեցնելով իր նախկին հարեւանների սրտում, որի հետեանքն այն եղաւ, որ առաջ եկան երկու որոշ կուսակցութիւններ, որոնք 3—4 տարի շարունակ իրար դէմ զանազան տեսակ խնդիրներ էին լարում և դատաստանական անընդհատ կռիւ մղում... Այդ տեսակէտից պէտք է նկատել, որ յիշեալ Նոր-Քաղսիի մի բուռ ժողովուրդը բաժանվելով և դուրս գալով հին գիւղից, մեծ դժուարութեամբ հաստատեց իր նոր բնակավայրը այդ նորընտիր տեղում՝ իր գիւղացիների կուսակցութեան կողմից այլ և այլ խոչնդանների հանդիպելու պատճառով:

Մի կողմ թողնելով այդ երկու հակառակ կուսակցութիւնների անախորժ վարմունքը՝ միմեանց տապալելու գործում, մենք կամենում ենք միայն մի պարզ հայեացք գցել այդ գիւղի ժողովուրդի անմիջապէս վիճակի վրա:

Մտնում էք այդ անշուք գիւղը և հետաքրքրութեան համար կամենում էք մի որոշ տեղեկութիւն ունենալ այդ գիւղի հասարակութեան դրութեան մասին: Սկզբում ձեզ ոչ ոք չէ ներկայացնում: Ամեն ինչ լուռ է այդտեղ և ամբողջ գիւղը կարծես մեռելութեան է մատնված... Միմիայն չենք են, որ իսկոյն չընթացաւ ևս ձեռք... Պաշտպանվելու համար կանգնում էք մի գետնափոր տան դրան առաջ, որտեղից չենք հայելու ձայնից կծկվելով դուրս է գալիս տանտէրը՝ իր անսպասելի հիւրին գամիւններից ազատելու համար... Նոյն խրճիթից դուրս են թափվում նաև 5—6 հոգի մանր-մունր երեխաներ, որոնք գլխաւոր, ոտաբոբիկ և գզգզված շորերով չընթացաւ ևս իրանց այցելուին: Նրանց վրա հայեացք գցելով մարդ խղճահարկում է, որ այնպէս, ձեռքերը ցրտից պատապարելու համար, կոխել են ի-

րանց հնամաշ, ցնցոտիացած հագուստի փեշերի տակ և վիզները ձկած ու ողորմելի դիրք բռնած խեղճ փռքերից մի կողմից դողդողում են, իսկ միւս կողմից նայում են այցելուի երեսին... Եթէ նրանք գոցեն իրանց սև սաթի պէս փայլող աչքերը, անկենդան դիակների կը նմանեն անշուշտ, այնպէս դեղնած, դալկացած և կմախք դարձած են... Դարձնում էք ձեր հայեացքը դէպի ձեր առաջ կանգնած հայրը և հարցնում էք թէ իր և թէ համագիւղացիների կեանքի, նրանց ընտանեկան կառավարութեան և ապրուստի մասին: Բայց գիւղացին արտայայտելով իր խորին վիշտը իրանց աղքատութեան մասին, դառն հառաչանքներով հանդերձ, սկսում է պատմել թէ իր և թէ իր հարեանների կեանքից... Իսկ դուք թէ և զգացված, յուզված, բայց անտարբեր էք գտնվում դէպի խեղճ գիւղացու գերզատանը, որը մի տխուր պատկեր է ներկայացնում ձեր առաջ այդ միջոցին: Ուրիշ ինչ կերպ վերաբերվէք. միթէ ողորմութիւն պիտի անելք. իսկ եթէ մի քանի կոպէք ողորմութիւն արած էլ լինէք, դրանով ինչ մի օգնութիւն արած կը լինէք գիւղացու բազմամարդ ընտանիքին... Ուստի մի երկու խօսքով մնաւ բարեւ էք ասում տանտիրոջ (դրանից գոնէ դո՛ւ է լինում խեղճ գիւղացին) և գլխաւոր, մտախոհ կերպով հեռանում էք...

Մտածում էք. միթէ այս գիւղի հասարակութիւնը, որը մի քանի տարի առաջ մի նշանաւոր տեղ էր բռնում չընթաց գիւղերի թուում, միթէ այդ նոյն ժողովուրդը այդ թշուառութեանն է մատնվել և ինչ մի արտաքայ կարգի պատճառով: Բայց ակամայից մտաբերելով յիշելով այն տխուր իրողութիւնը, այն երկպառակութիւնը, որը 4—5 տարի առաջ սկսեց այդ գիւղի ժողովուրդի մէջ, հանում էք այն եզրակացութեան, որ այն երկու որոշ կուսակցութեան ոգին էր, այս, որ թուական իրի նման երկպառակութեան սերմեր ցանկնելով երկու անհաշտ բանակների էր բաժանել այդ նշանաւոր գիւղի հասարակութիւնը... Իսկ երկու հակառակ կուսակցութիւնները բաժանվելը, երկու միմեանց դէմ մրցող թափաշներ կազմելը, շատ է ժամ չի նստի մի ուր և է գիւղի ժողովուրդին այն ժամանակ, երբ այդ կուսակցութիւններից մէկը միւսին ջանում է հարուածել, տապալել և նիւթական ամեն կերպ վնասներ հասցնել...

Յիշեալ Նոր-Քաղսի գիւղի ժողովուրդը, որը տխուր տապաւորութիւն է գործում ամեն մի այցելուի վրա, նիւթական խղճալի դրութեան մէջ է գտնվում այժմ: Այդ մասամբ պէտք է հասկանալ և նրանից, որ այդ գիւղի նորակառուց ու Գեորգ անունոված եկեղեցին այնքան աղքատ է (իսկ յայտնի է, որ թշուառ գիւղացու հոգեկան միակ միջոցարարութիւնը եկեղեցին է), որ ոչ միայն դուրկ է եկեղեցական ու. սպասեցիկ և այլ և այլ անհրաժեշտ առարկաներից, բայց և ճորագույն լոյսից—մոմերից: Լաւ է, որ անցեալ տարի Ներքին-Ախտայում վերաբնակվող Զ. Սինանեանց և Ս. Աւետիսեանց Մօսկվայից բերել տուին յիշեալ աղքատիկ եկեղեցու համար մի լաւ վարագոյր, որի համար նոյն գիւղի հասարակութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում յիշեալ անձինքներին: Յանկալի է, որ ուրիշ բարեխիտ անձինք ևս հետեւին յիշեալ պարոնների բարի օրինակին և չը զլանային օգնութեան ձեռք կարկառել Նոր-Քաղսի գիւղի նորակառուց եկեղեցուն, որով նպաստած կը լինէին այդ գիւղի չքաւոր ժողովուրդի անտեսական դրութեանը:

ՆԱՄԱԿ ԽՊՐԱԳՐՈՒՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 6-ին

Ներկայ լինելով հայոց ներկայացումներին, բեմը յարգող ամեն մի մարդ չէ կարող սառնասր-

տուրքերն առնել մեր թատրոնական հասարակութեան մի շատ անտեղի սովորութեան վրա:

Մեր հասարակութեան մեծ մասը իրան պահել չը գիտէ թատրոնում: Երեւակայեցէք, ծիծաղում են այնպիսի ժամանակ, երբ լաց է հարկաւոր, ծափահարում են, երբ խորին լուսթիւն է պէտք, հոգում են այն միջոցին, երբ բեմի վրա խաղացողի սիրտը կտոր-կտոր է լինում:

Վերցնենք, օրինակ, հենց վերջին ներկայացումը՝ Հոգով աղքատները: Բեմը ներկայացնում է մի սրտաճմլիկ տեսարան: Խաղված, ոտնակոխ եղած, բայց սիրահարված կինը քիչ է մնում խելագարվի, և ահա հասարակութիւնը, առանց պատճառի, ծիծաղում է, տեսնելով բեմ դուրս եկող մի աղախին, կամ ծառայ: Հարցնող լինի քիչ կայ այդտեղ ծիծաղելու: Գերասանը և դերասանուհին, վերջին հրաժեշտի բոլորին, արտասուքը աչքերին, համբուրվում են, իսկ հասարակութեան մէջ ծիծաղ է բարձրանում, նոյն իսկ բացականչում են՝ ուրիշ, իսկ ոմանք էլ բարձրաձայն ասում են. «դէ՛հ, հէրիք է դա. ուաղ եղէք»:

Ասեցէք, խնդրեմ, էլ ինչ սրտով խաղաց դերասանը:

Մի գործողութեան մէջ տիկին Սերանոյն միջոց կէս է լինում բնական կերպով ներկայացնելու՝ մարդուց բաժանվելը և ճանապարհ գցելը, — և հետո էլ էլի մի անտեղի հոգնուց և ծիծաղ զանազան կողմերից: Ասեցէք, որ շուրս ընկնի դերասանուհին: Հասարակութեան կատարեալ իրաւունքն է արտայայտել իր գոհունակութիւնը, կամ դժգոհութիւնը դէպի խաղացողը: Դա իրաւունք ունի ժամերով ծափահարել, ժամերով չվայելել: Բայց ախր ամեն բան իր տեղն ունի: Ախր ինչի նման է: Գերասանը վատ է խաղում, — լուռ են: Գերասանը դերը չը գիտէ, — պապանձվում են: Անժամանակ բեմ են դալիս և դնում, — հասարակութիւնը ներում է: Եւ յանկարծ նոյն հասարակութիւնից շատերը հոգնում են, քիչիւմ, անկայել բացականչութիւններ են անում, երբ ոչինչ առիթ չը կայ, երբ պատճառ չը կայ:

Էլ ուր մնաց բեմի գեղարուեստական, կրթիչ, ոգեւորիչ... և այդպիսի նշանակութիւնը...

Վերջապէս էլ ինչպէս կարող է խաղացողը ոգեւորվի, կամ սանձահարվել այդ տեսակ հասարակութեան ծափահարութիւնից կամ չվիճից:

Հասարակութեան մի մասի այդ անվայել դերքը բոլորովին անտանելի է դարձնում նոյն հասարակութեան միւս մասի դրութիւնը, որը թատրոնում նստած՝ ուղում է հետեւել խաղին, ապրել բեմով, զգալ, հասկանալ...

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Յայտնում ենք մեր այն բաժանորդներին, որոնք «Մշակի» ներկայ 1891 թվին դեռ չեն վճարել իրանց բաժանորդագինը, կամ այդ բաժանորդագինի միայն մի մասն են վճարել, և նորից գրվելով 1892 թվին համար, դարձեալ չեն ուղարկում իրանց վրա մնացած ապագելը, որ այդպիսիներին մենք «Մշակ» լրագրի չենք ուղարկի 1892 թվի ընթացքում և ստիպված կը լինենք այդպիսիներից իւրաքանչիւրին մասնաւոր նամակներ գրել, որպէս զի ուղարկեն մեզ իրանց վրա մնացած ապագելները:

Այսօր, հինգշաբթի, 12-ին դեկտեմբերի, թիվ 110-ի հայոց դերասանական խումբը ներկայացնելու է Արեւունական թատրոնում Շերվանդադէի 4 գործողութեամբ «Իշխանուհի» դրաման: Մասնակցելու է ամբողջ խումբը: Սկիզբը 8 ժամին երեկոյեան:

Թիվ 110-ի դերասանական խումբը շուտով ներկայացնելու է ի նպաստ տիկին Մէլքեանի և պ. Տէր-Դաւթեանի «Մայրական սէր» պիէսան:

Պետերբուրգի մեզ գրում են. «Այս օրերումս հրատարակվից Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական ստացուածքների կառավարութեան 1890 թվականի հաշիւը: Հաշիւը երկու է, որ յիշեալ տարւոյ մուտքը եղել է 80,429 ռ. 20 կ., իսկ ելքը 44,892 ռ. 45 1/2 կ., օրից զուտ արդիւնք մնացել է 35,536 ռ. 74 1/2 կ.: Ինչպէս յայտնի է, յիշեալ եկեղեցիների խորհրդարանը ստանձնեց եկեղեցական ստացուածքների կառավարութիւնը 1884 թվի սկզբներում: Այդ ժամանակից մինչև

1890 թ. եկեղեցական մայր դռնաբաց, տարուց տարեմեծանալով, աւելացաւ մինչև 173,627 ռ. 27 1/2 կ.: Հաշիւի մէջ գտնվում են հետաքրքրելի տեղեկութիւններ այդ տարւոյ զլխաւոր անցքի մասին, որը յիշեալ մի նշանաւոր գործ է, այն է եկեղեցապատկան տան մի մասի վերաշինութիւնը: Տան վերաշինութիւնը յանձնված էր մայրաքաղաքի յայտնի ճարտարապետ Շերետերին. ներկայումս արդէն վերանորոգված բազային երեք մասերը ենթադրեալ նախահաշիւն համաձայն հաշուած էին մինչև 247,500 ռ., մինչդեռ կառուցանող մասնագործով չնորհով (որը կարմված էր բացի պ. Շերետերից, պ.պ. Եղորեանից և Վարդանեանից) այդ ամբողջ կառուցումը նստեց միայն մօտ 200,000 ռ.: Չէ կարելի չը համաձայնել խորհրդարանի հետ, որ յիշեալ մասնագործով գործուեցութեան արդիւնքը, հետեւեալ լինելով շինութեան նիւթերի և աշխատանքների էժան գնով ձեռք բերելուն, ամենայն իրաւամբ փայլուն պէտք է համարել»:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ հոգ տանելով մետաքսագործութեան զարգացման մասին Կովկասում, պետական կառավարների մի-նիստութիւնը մտադրութիւն ունի եկող տարի իր երկու պաշտօնեաներն ուղարկել Կովկաս՝ մետաքսագործութիւնը և նրա կարիքները մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու նպատակով:

«НОВОСТИ» լրագրի հաղորդում է, որ ինֆլուէնցիա հիւանդութիւնը Պետերբուրգում սկսում է զգալի կերպով թուլանալ: Ներկայ տարւոյ օգոստոս ամսից ինֆլուէնցիայով հիւանդացողների թիւը գնալով աճում էր և մաքսիմումին հասաւ հոկտեմբերին, այնպէս որ այդ ամսւոյ ընթացքում թէ քաղաքային և թէ ալ հիւանդանոցներում ինֆլուէնցիայից բժշկվում էին 513 անձինք: Նոյնիսկ ամսի ընթացքում նորից հիւանդանոցները մտան բժշկվելու համար 168 տղամարդիկ և 206 կանայք, ընդամենը 374 հիւանդներ: Սակայն մահուան դէպքերը, առաջվայ պէս, աննշան են:

Ինչպէս երևում է, առաջիկայ տարվանից ամբողջ Անդրկովկասում չը պէտք է հրատարակվի ոչ մի հատ թուրք և բէն լրագիր: Դա վերին աստիճանի տխուր երեւոյթ է: Միթէ այսպիսի դանդաղ քայլերով առաջ պէտք է գնալ մեր մասնետական դրացիների մոտաւոր զարգացման գործը:

Մայրաքաղաքում կրկին սկսել են խօսել այն մասին, որ շուտով գուցէ կը հիմնվի երկրագործութեան միխտարութիւնը:

Մեզ տեղեկացնում են, որ իբրեւ թէ կարգադրութիւն է եղել, որ այլ ևս ուսու զաղթականներ չը փոխադրվեն դէպի Բագու:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ հաղորդակցութեան ճանապարհների միխտարութեան մէջ մեծ փոփոխութիւններ են սպասվում:

Կիրակի օր, դեկտեմբերի 8-ին, թիվ 110-ի երաժշտական կրթութեամբ կայացաւ զգեստաւորված պարահանդէս յօգուտ Ռուսաստանի սովետականների Պարահանդէսը շատ լաւ անցաւ, նմանապէս շատ աջող էին կենդանի պատկերները: Դահլիճը, որը շատ գեղեցիկ կերպով զարդարված էր, կատարեալապէս լի էր բաղմունքով:

Մեզ լսողում են տպագրել հետեւեալը. «Զիդ-դամով հայոց ծխական զարդի հոգաբարձութիւնը պատիւ ունի ինդերեւ այն ուսումնասիրանձանց, հեղինակներին, խմբագիրներին և ընկերութիւններին, որոնց սրտին միշտ թանգ է հայ-գիւղական մատաղ սերնդի առաջադիմութեան գործը, բարեսանձին օգնել իրանց նուէրներով՝ գրքերով, դասական պիտոյներով և կամ դրամով վերջինիս զարդին և նրա նորաբաց գրադարանին: Նուիրատու անձանց անունները կարձանագրվին ուսումնասիրանի մատենանում և ի լոյս կընծայվին: Նուէրները կարելի է ուղարկել հետեւեալ հասցեով. ВЪ Камарлу (Эрив. губ.), попечительству церковн. Армянск. училища сел. ЧИКДАМЛУ»:

Պետերբուրգի մեզ գրում են, որ անցեալ հոկտեմբեր ամսի 25-ին Պետերբուրգի հայոց եկեղեցիների հոգաբարձութիւնը զիմեց «Վարմիր-

խաչի» ընկերութեանը հետեւալ նամակով. «Ռուսաստանի ներկայ ծանր ժամանակը, երբ պետութեան բոլոր բնակիչները, առանց աստիճանի և հաւատի զանազանութեան, ոգևորված են մի մտքով՝ օգնել անաղղ հունձից շինարարներին, մայրաքաղաքին հայոց եկեղեցիներին խորհրդարանը չէր կարող անտարբեր մնալ մերձաւորներին օգնութիւն հասցնելու գործում, և չը նայելով եկեղեցու նիւթական այժմեան նեղ դրութեան, որն առաջացել է եկեղեցական տան վերաշինութիւնից, վճեց. 1) ներկայ տարւոյ բնագործի մնացորդից 1000 ռուբլի յանձնել «Վարմիր-խաչի» ընկերութեան տնօրինութեանը կայսրութեան սովետանը ազգաբնակչութեանը բաժանելու համար և 2) նոյն նպատակով ծխականների մէջ ստորագրութիւն բանալ, նուիրատուութիւններ հաւաքելու նպատակով, մինչև սովի տեսելը»:

Այդ նամակին «Վարմիր խաչի» ընկերութիւնը պատասխանել է պաշտօնական գրութեամբ, որ Նորին Մեծութիւն թագուհի Կայսրուհին բարեհաճեց բարձրագոյն հրամայել՝ չնորհալուել ինչ յայտնել Պետերբուրգի հայոց եկեղեցիների հոգաբարձութեանը նրա ցաւակցութեան համար դէպի Ռուսաստանի սովետալ գիւղական ազգաբնակչութիւնը:

Քրիստոսի մեղ գրում են. «Այս օրերս կովկասեան ուսումնասիրական շրջանի հոգաբարձու պ. Եանսովսկի այցելեց փութայիս բոլոր ուսումնաւորները, պ. հոգաբարձուին ընկերակցում էր պ. Չալադանի: Երեք թէ չորս օր փութայիսում մնալուց յետոյ, պ. Եանսովսկի ուղևորվեց Խոն գիւղը, քութայիսեան Ռուսոցական դպրանոցն այցելելու նպատակով»:

ՇՈՒՇՈՒՅ մեղ խնդրում են տպագրել հետեւեալը. «Զեր լրագրի 137-որդ համարում տպված Շուշու թեմական զարդի ֆիդիկական կարիքների և գրադարանի մասին տեղեկութիւնները սխալ են: Թէ ֆիդիկական կարիքներ և թէ գրադարանը այս օրպէիս միանգամայն կանօնաւորված և հարստացած են նոր գործիքներով և գրքերով, որոնք և գործադրվում են, ըստ հարկին: Լրատուի նկատմամբ անժամանակ է, իսկ անցեալի միջոց ներկային չէ վերաբերում: Թող յարգելէ նուիրատուները ազատով լինեն, որ իրանց նուէրները փոխ մէջ չեն պահպանվում, անգործադրելի և անխնամ մնալով, այլ ընդհակառակն»:

Դեկտեմբերի 9-ին դաստիարակչական ընկերակցութեան «Օտեկո» — НА ИЗНАНКУ: Հմարիտ է ասած. «СМѢЛОСТЬ ГОРОДА беретъ» և միայն Ռուսօվի յանդիմութիւնը պէտք է ունենալ խաղալու համար մի այնպիսի Օտեկո, ինչպիսին նա խաղաց դեկտեմբերի 9-ին: Քննադատել այդ տեսակ մի խաղ կը նշանակէ պատիւ անել խաղացողին: Այդ տեսակ խաղացողների միակ ստիպանք՝ վարձված կլ և կ օր ն ր ծափահարութիւնն է:

Հրատարակչական ընկերութեան՝ օգտին տրւած ներկայացումից արդիւնք մնում է մօտ 400 ռուբլի: Այդ մասին ուսու լրագրիները հաղորդած տեղեկութիւնները ճիշդ չեն:

Արտասանման հայոց լրագրիները հաղորդում են մի տխուր լուր, որ իբր թէ Արսէն վարդապետ Թումանյանից սպանված է: Այդ լուրը հաղորդող լրագրիները չեն երաշխաւորում լուրի ճշդութեան համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Արտասանման հայոց լրագրիներում կարգում ենք հետեւեալը:

«Ամերիկայի հայ գաղթականութիւն մեծ մասամբ ամուրի երիտասարդներ է կը բաղկանայ, և անոնք ալ որ կանամբ են, իրենց կին և զաւակներ թողած են ընդհանրապէս Հայրենիքն և եկած են այսր առանձին: Սրբա պանդուխտ մասնաւոր կրնան կոչուիլ քան գաղութ: Իրենց զիտաւորութիւն է վերադառնալ յայրենի մի քանի տարի աշխատել և քիչ կամ շատ փող հաւաքել յետոյ»:

«Կան սակայն և մի քանիներ որք իրենց կիններ միասին բերած են, և կան ալ որ ժամանակ մի հոս մնալէ յետոյ վերադարձած են ի բնիկ

երկիր յատկապէս ամուսնախու համար, և հանդերձ ամուսնով եկած են նորէն յԱմերիկա: Եղած են նաև ոմանք որք թղթակցութեամբ յաջողած են Արեւելքէն բերել իրենց լծակից, ինչ որ ուրիշ ցեղեր ևս երբեմն կընեն առ հարկի: Միանգամ իբր 30 օրերոցն միահաղոյն հասան Շուշուին Նիւ-Եորք, ամենն ալ թղթակցութեամբ կամ ամուսնական գործակալութեան մի միջոցաւ: Նշանված լինելով իրենց պանդուխտ համազգեստի ի Միացեալ Նահանգս:

«Զը զիտանք թէ մեր պանդուխտներուն մէջ ըրերն քանին ամուսնացեալ է, դեռ ճիշդ չի կազմութիւն կը պակսի: Ծանօթ է, սակայն, և ամուսնացեալ Հայեր աւելի բազմաթիւ են երկրորդը և հողատէր գաղթականութեանց մէջ զը խաւորապէս ի Քալիֆորնիա: Ուսման գործաւ գաղթականութեան մէջ, որ 6—700 անհատներ է կը բաղկանայ, 6 կամ 7 ընտանիք միայն կը գտնուին Ն. Եորք քաղաքին և Պրուքլինի մէջ կան իբր 20 հայ ընտանիք, որոց 12-ի Պրուքլին: Ասոնց երկու երրորդն հայ ընտանիք են, իսկ մէկ երրորդն հայ—Ամերիկացի այսինքն այն հայ և կինն ալ մերիկացի: Ի ձերք ի Սիթի Հայոց ևս կան ոչ սակաւ ընտանիք:

«Ամերիկացի կին առնող Հայուն դաւաններն անգլիկներն կը խօսին միայն, և բոլորովին օտարաւորաւ այսինքն ամերիկացի լինելու ուղղութեան մէջ են: Այս պարագայն շատ զարմանք կամ ցաւ չը պատճառէր հայ հօրն, որ ամերիկացի կին ընտրելու օրէն գիտէր թէ իւր սերունդ անգլիկաւոր պիտի լինի: Տղայք միշտ իրենց մօր հետ կը սովորեն նորա լեզուն ոչ թէ հօրն, որ երեկոյեան միայն տուն կը լինի և քիչ ժամանակ արթննալ կը տեսնէ երախայնիներն:

«Ամերիկացի կամ օտարազգի կին ընտրող Հայ պանդուխտ յաճախ նեղի մնացած լինելով այդպէս կընէ: Արդէն հայ օրերոցներ գրեթէ չը կան այս երկրի մէջ. Տաճկաստան երթալ յատկապէս կին մի բերելու համար՝ բաւական մեծածախ ձեռնարկ մ'է, մանաւանդ որ գործաւոր հայն կը վախէ թէ իւր գործի տեղ միանգամ թողլէ ևս եղան նորին գտնելու դժուարութիւն կը կրէ:

Նիւ-Եորքի և շրջակայից Հայերուն ամբողջ թիւն 6—700 կը կարծուի: Սրբա մեծ մասամբ գործաւոր են, բայց կան շատեր որք պարզ ֆիզիկական ոյժ գործածող կարգին չեն վերաբերել, այլ կը կատարեն բաւական խելք և ճարտարութիւն պահանջող գործեր. կան բազում փորագրիչներ, կալվածատիրաւ և ելեքարատիրաւ աշխատաւորներ, (այս վերջին ճարտարութիւնն այժմ հայ գործատուներ ունեն Նիւ-Եորքի մէջ, Տ. Պոլոս Յակոբեան լինելով պետն), դերձակ, կարմարաք, գրագիր: Կան 6 վաճառականներ արեւելեան ապրանքներու, և 8 բժիշկներ: Նկատելով այս պարագայներ, յուսալի է թէ Նիւ-Եորքի և շրջակայից մէջ հայ ընտանիքներու թիւն այնքան մեծնայ որ 5—10 տարին կարենան հայ նախակրթաւ մի հաստատել, ուր թէ զուտ հայ, թէ ամերիկացի կին ունեցող հայ ընտանեաց դաւակուցք ուսանին հայերէն հանդերձ այլ ուսմամբը:

«Առ այժմ Հայկական Միութեան նիստը կը կատարեն Լսարանի և վարժարանի պաշտօն միանգամայն: Ծառ Հայեր մեղ խոստովանած են թէ չնորհիւ ալ Միութեան նիստերուն իրենք միայն չեն մոռցած ինչ հայերէն որ գիտէին եկան այս երկիր, այլ և զգալի յառաջդիմութիւն ըրած են»:

ՊԱՏԻՍԻՐԱԳԱԿԱՆ ԿՈՆԻԱԿԸ

Ժամանակները տարօրինակ պահանջներ են երբեմն: Երեւոյթներ յառաջ կը բերեն որք ուրախալի են, երեւոյթներ ալ որք վշտալի են: Այս վերջնոց կարգէն են այն պարագայք որք ի նկատ առնելով ամեն. տ. խորէն տ. պատրիարք հայրն հարկ դատած է հանել կոնգրէսին, որ այս կիրակի կարգացուցաւ մայրաքաղաքի եկեղեցեաց մէջ, և զաւառներն ալ զԷրկուեցաւ, ամենուրեք ուր հայ կայ եկեղեցեաց մէջ կարգացուցու և հռչակուելու համար: Այն պարագայից մէջ զոր կը նկարագրէ՝ ն. որքա՞ղ նուիրելու լաւ ներշնչում մը ունեցած է այսպիսի հայրական ազգու պատուէր մը հանելով իւր հօտին, զոր կը զգուշացնէ օտար երկրաց մէջ հրատարակուած ծայրահեղ թերթերու և այլ գրութեան ներու ազգապիտան թեղաբուրութեանց դէմ, որք ալ զին հաւատարմութեան և օրինաւորութեան ար պահով շարժներն խոտորեցնել կը ճգնին, ի՞նչ

խանութիւնաց զէմ վատահամբաւի բաներ գրի-
լով չափազանց նկարագրութիւններ ընելով և
խմբարկան խորհուրդներ արտայայտելով: Իրա-
ւունք ունի ս. պատրիարք հայրն յանուն ազգին
ցաւ յայտնելու այս անխոհեմներու ընթացքին
համար, և սա ուշագրաւ դիտողութիւնն ընելու.
Այս պայտիսի անխոհեմութեան թիւն և օրինա-
ւոր շատնայ, տարակոյտ չը կայ, որ ազգը պիտի
տուժէ. յայտնում փորձով պիտի տեսնենք վիճակ-
նիս և պիտի դարմանանք այն դարուն առաքի-
նութեան վրա՝ յորում մեր հայրերն ի հունն աղ-
զին և եկեղեցւոյ պահպանման հարկ եղած խո-
հեմութիւնն և իմաստութիւնն ունեցան, և ընդ-
հակառակն պիտի ամաչենք այս դարուն լուսա-
ւորութեան վրա՝ յորում լուսաւոր մտօք և բաղ-
մաճիւղ գիտութեանց արդիւնքով պիտի կորսնց-
նենք նախկին ժամանակաց մէջ մեր հայրերուն
շահածները:

Իրաւ է, որ քանի մը անխելքներու ձեռնարկն
ընդհանուր ազգին անմեղութեան համբաւը խնդ-
րոյ տակ չի կրնալ ձգել: Բայց միամիտ ժողո-
վուրդն հրապուրուելով գաղթականութիւնը և դը-
լորմունք կրնան շատնալ, բաւական տարապա-
տուց կը մշտնադնեն, պատրիարքարանի կողմէ մա-
տուցեալ խնդիրը երեսն վրա կը մնան, և ոմանց
մոռնակովը բոլոր ազգը կը տուժէ ի վերջոյ,
կասկածք, զննութիւնը և այլ ցաւալի իրողու-
թիւնը կը յաճախեն, և այն և այլն: Շատ իրա-
ւացի են այս մասին ամեն. ս. պատրիարք հօր
գիտողութիւնը, որը աշխարհային իմաստութեան
խորհրդոց համաձայն լինելէ դատ, Ս. գրոց ևս
համաձայն են, և ի մասնաւոր Պօղոս Առաքելոյն
խրատները՝ զորս նոր. սրբադիտութիւն ի մէջ բե-
րած էր, սքանչելապէս կը յարմարին ժամանակին
պահանջմանց: Պէտք է յիշել թէ ս. առաքեալն
այն ազգու պատուէրները տուած էր քրիստոնէից,
երբ սոքա կը նեղուէին Հռոմայ հակաքրիստոնէա-
կան կայսերաց երեսն, մինչ այսօր քրիստոնէից
զէմ այնպիսի հաւածմունք չը կրնալէ դատ, հայ
եկեղեցին կը վայելէ Օսմանեան փառապանծ տան
հովանաւորութիւնն, որոյ չուզին ներքև, ինչպէս
ս. պատրիարք հայրն ալ կը յիշենք, հայ ժողո-
վուրդն արտօնութիւններ կը վայելէ իւր լեզուն,
իւր աւանդութիւններն, իւր ազգութիւնն և իւր
կրօնը պահպանելու, և իւր ներքին զարգացման
և իմացական ու բարոյական յառաջդիմութեան
հետամտելու:

Այն անխոհեմ գործիչներու մշտնապար վար-
մանց զէմ մեք ուրիշ անգամներ ալ բողոքած է-
նք: Կը յիշենք ի մասնաւորի 1888 նոյեմբերի 26
թուով «Արեւելք» մէջ «Որոտան խնդիրներ».
«Վնասակար հրատարակութիւնը և կառավարա-
կան վատահոլութիւն» խորագրով մեր հրատարա-
կած ազգային յօդուածն, յորում բացարձակ կը
յայտարարէինք հետեւեալն.

«Անխելութիւնը կը պահանջէ ըսել, թէ ամե-
նեին ազգապիտութիւնն չէ, քաջութիւն ալ չէ, այլ
ընդհակառակն է՝ հանգիստ նստիլ օտար երկիր-
ներու մէջ, պատասխանատուութիւնէ՝ բոլորովին
զերծ վիճակի մէջ, և յիմարական հրատարակու-
թիւններ ընել, որը ազգին տուած կը կործանեն,
որը թուրքոյ մէջ ընալիս հաւատարմի հայ ժո-
ղովուրդը նշաւ կը կրնան անվատահոլութեան, և
անվատահոլութեան առթիւ ամեն կարգի հետեա-
նաց: Բայց այս մշտնապար հրատարակութեանց հե-
ղանկները բոլոր ազգին հաւաքաբար մշտնադնելն
զատ, մասնաւոր անհատներու և ընտանիքներու ևս
աղտոյց պատճառ կը լինին: Իրենց թերթերն կը
գրեն անպիտան անձերու, որը երբեք յարաբերու-
թիւն չեն ունեցած իրենց հետ և չեն համարած ի-
րենց արարքն. և այս կերպիւ ալ անձերը մասնա-
նիշ կընեն երկրին իշխանութեան՝ իբրև իրենց հա-
մախոհ: Այսպիսի աղեղ հնարք մը որ պատուաւոր
մարդ կընդունի, և սակայն յիշեալ հրատարակիչը
անխելութիւնը մինչև այն աստիճան յառաջ կը
տանին»:

1888 նոյեմբերին ի վեր տեղի ունեցած ցաւա-
լի զէպքերն, որը ամենուս յիշողութեան մէջ են
«Արեւելք» վարիչ մարմինն ու խմբագրութիւնն
աւելի ևս հաստատած են այս համոզման մէջ, և
ամեն. ս. պատրիարք հօր կոնգալն անգամ մը ևս
առիթ կընծայէ մեզ նոյն զգացումները չեղտելու,
պախարակելով այս յախուռն և անտեղի հրատա-
րակութիւններն, հերքելով անոնց ազգամիտ
պարտականութիւնն, և զգուշացնելով մեր ընթեր-
ցողներն, որ ոչ միայն իրենք չը հրապուրուին
այսպիսի վատագուտ գործիչներէ, այլ և ամեն
որ իւր ազգեկաններն չըջանակին մէջ փոյթ տա-
լու:

նի, որ տուն ու տեղ քանդող և ազգին օրինաւոր
գործերը վտանգող այսպիսի թերագրմունք քա-
ջալերութիւն և օժանդակութիւն չը վայելեն: Ինչ-
պէս մեր յիշեալ յօդուածին մէջ ալ ըսած էինք,
«Թուրքոյ հայք ի վաղուց անտի գզգաւած են թէ
իրենց վայելած բարիքները կը պարտին Օսմա-
նեան գահուն բարեբար հովանոյն, և ասկէ
ետեւ ալ իրենց կացութեան ամեն բարեբարում
ամեն նորանոր բարիք վեհ. սուլթանին հայա-
կան իշխանութեան ներքև միայն կրնան վայելել»:
Առ այս անհրաժեշտ է, որ Օսմ. սուլթանին
վատահոլութիւնն իւր հաւատարմի հայ հպատակաց
վրայ՝ անխախտ և անվճար մնայ, և հետեւապէս
այն ամեն արարք, որը կը նուազեցնեն կառա-
վարական այդ թանգազին վատահոլութիւն՝ ինքնին
դատապարտելի և ազգամիտ են: Այս հաստատ
համոզման մեք ևս չենք վարանիլ յայտարարել,
թէ մեր ակնարկած հրատարակութիւնը զլիտլին
դատապարտելի են և ազգամիտ: Այս հրատա-
րակութիւնը օտարահպատակ հայոց ոմանց գործ
են, որը թուրքոյ մէջ ըսաւ կապ չունին թուր-
քոյ հայոց զէմ մեծ անխելութիւն կը լինէր
կարծել, թէ անոնք կը քաջալերեն այսպիսի հրա-
տարակութիւններ:

Ինչպէս կրնին, մեք ի վաղուց համաձայն ենք
արդէն այն պատեական խորհրդոց և խրատուց,
զորս ամեն. ս. պատրիարք հայրն յայտնած էր
իւր կիրակի աւուր կոնգալաւ, և կը յուսանք ու
չերմայէս կը մաղթենք, որ այս կոնգալ արժան
եղած ակնածութեամբ և երկնազածութեամբ ըն-
դունուի և միամիտներն զգուշացնեն ապօրինի թե-
ւաղմանց զէմ, որոնցմէ բարիք չի կրնար ծնիլ
երբէք:

(Արեւելք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից լրագրիւններին հեռագրում են
նոյեմբերի 30-ից (գեկտեմբերի 12) հետեւեալը.
«Գիւլտումարական շրջաններում հաւատացնում
են, որ շուտով Բ. Գուրը դիտաւորութիւն ունի
թէ իր և թէ Բուլղարիայի կողմից բանակցութիւն-
ներ սկսել Աւստրո-Ունգարիայի հետ առեւտրական
դաշնադր կապուել համար: Սօֆիայի կառավա-
րիչները բողոքում են Բ. Գուրն այդպիսի խնա-
մակալական միջամտութեան զէմ և յայտարա-
րում են, որ ցանկանում են ինքնուրոյն կերպով
բանակցութիւններ կապել Աւստրիայի հետ, կա-
տարելապէս անկախ թիւրքերէն: Հաւատացնում
են, որ այդ տարածաշրջանները կարող է կուր-
առաջացնել Կ. Պոլսի և Սօֆիայի մէջ»:

—Պարիզից հեռագրում են, որ պապը յանդի-
մանել է այն ֆանատիկոս ծայրայեղութիւնը, որ
կղերական կուսակցութիւնը վերջերս արտայայտել
է Ֆրանսիայում:

—Կ. Պոլսից հաղորդում են նոյեմբերի 30-ից
(գեկտեմբերի 12), որ այնպիսի հրատարակիչ
Ֆրանսիական «Stamboul» լրագրիւր կառավարու-
թեան հրամանով խափանել է անորոշ ժամանա-
կով իր սիրականները մէջ գերմանական կայսրի
զէմ մի վերաւորական յօդուած արտատպելու
պատճառով:

—Թիւրքաց կառավարութիւնը հերքում է Վիեն-
նայի լրագրիւններից մէկում ապկած այն լուրը, որ
թուրքութիւն է բացվել Այդ Էրեւ, թիւրքաց կա-
ռավարութեան խօսքերով, հիմնովին սխալ է:

—Գեկտեմբերից ի վեր Մարտիկ մէջ սկսել է
հրատարակվել «L'Etoile du Bosphore» Ֆրանսե-
րէն շաբաթաթերթը, որի նպատակը պիտի լինի
ինչպէս զրկած է լրագրի ճակատին, Ֆրանսիա-
կան շահերը պաշտպանել «Արեւելք» մէջ: Առա-
ջին թիւի պարունակութիւնը հետեւեալն է. մի
աղաքագրութիւն Սուլթան Համիտին ուղղուած,
որ իրան չըջապատող շողոքութիւններից ազատէ.
մի բանի ուրիշ յօդուածներ, որոնք Ֆրանսիական
ազգեկանութեան Արեւելքի մէջ գործնելն են ջա-
տագրում: Մի քանի տող էլ Հայերի կրած նե-
ղութիւնների մասին է գրված:

—Թէհրանից հետեւեալն են գրում եւրօպական
մի հայ լրագրիւն. «Վայմաստի հայ կաթողիկ միութե-
անը Մոլդաւիա ազգապետաց վարդապետը որ Գալ-
լիժում դատ էր բացել Սալմաստի հայ վաճառա-
կաններին զէմ, իր ընկեր Սրապիոն Վ. Պարո-
նեանի օգնական առնով, այնտեղ չը կարողա-
նալով իր զրպարտութիւն հաստատել, մինչև
թէհրան եկած է այս անգամ, դատը շարունակե-
լու: Այստեղ մի անտարկ հրատարակուց ընդդէմ

Արապատական կառավարիչ Ամիր Նիզամին,
Հայերի առաջնորդ Ստեփաննոս Կալիսոյոսին և
Սալմաստի ու Գալիլիժի հայ վաճառականներին.
սակայն Վ. Դահը խստիւ արգելեց տեսարակի
տարածումը և մինչև իսկ հրամայեց որ ետ առ-
նուին ցրուած օրինակները: Հրատարակողը խա-
ղախութիւնը հէնց այնտեղ էլ երևան ելաւ որ
թէհրանում պարսկական մամուլը տպուած մի
տեսակով Վենետիկ Միլիթարեանց տպարանի
անունով էր տարածել»:

—Մակեդոնիայից կրկին հաղորդում են, որ
արնատուններն այնտեղ դադանային արշաւանքներ
են կատարում: Արնատունների չորս խմբեր, որոն-
ցից իւրաքանչիւրը բաղկացած էր 300—350
հոգուց, ներս խուժեցին արևելեան Մակեդոնիա
վայրերի Գօրայից, որտեղ սով է տիրում, և
անցնելով մարտընդ առին Տէօօլօ և Կիլիկի
շրջանները, ուր ազգաբնակչութեան մեծամասնու-
թիւնը քրիստոնեաներ են: Նրանք ութ դիւղեր
այրեցին, և օժանապետ մարդկանց սպանեցին,
յախիջակեցին տաւարը և ամբողջ շարժական
կայքը, և գլուղի վեց տանուտէրերին գերի տա-
րան որպէս պատանդ: Կ. Պոլսի սերբիական զե-
պան Գրուիչի համար այդ առաջակութիւնները
մի նոր ապացոյց են կրկին հաստատելու սեր-
բիացիների նախկին զանգառները՝ թէ թիւրքաց
դատաւորները, առաջալ կարնատուններին դատելու
ժամանակ, միշտ արգարացնում են նրանց: Օրի-
նակ, Սանիդում նորերս դատաւորները արդա-
րացրին հինգ թիւրքերին, որոնք Սերբիայի վրա
արշաւանք գործելու ժամանակ սպանել էին սեր-
բիական երկու պաշտօնեաներ:

—Լրագրիւններին հեռագրում են, որ Ֆրանսիա-
ցի յայտնի վիպասան Գիւլի-դը-Մօպասան, որը
վերջին ժամանակ ջրային հիւանդութեան էր են-
թարկված, զետեղված է այժմ գոմարտում:

—Վիեննայից հեռագրում են գեկտեմբերի 3-ին
հետեւեալը. «Այսօր այստեղ վախճանվեց էրցհեր-
ցօգ Սիդիզիմունդ Թոքերի բորբոքումից: Նա միսեց
իր եղբոր յուզարկաւորութեան ժամանակ»:

—Փարիզից հեռագրում են, թէ վերջնականա-
պէս վճարված է, որ Վիլհելմ կայսրը փոխադարձ
այցելութիւն կանի ռուսական թագաւորին և
կող տարվայ ապրիլ ամսում:

—Նորերս բուլղարական կառավարութեան հրա-
մանով արտօնվեց Բուլղարիայից «Հալասի գոր-
ծակալութեան» թղթակից Շադուրն: Այժմ Պա-
րիզից այդ առիթով հեռագրում են, որ Սօֆիայի
գիւլտումարական գործակալի պահանջը՝ թոյլ
տալ վերադառնալ թղթակցին Բուլղարիա վերա-
դառնալ՝ մերժելով, իբրեւ հրամայեց Սօֆիայի
գիւլտումարական գործակալին կարել յարաբերու-
թիւնները Բուլղարիայի հետ:

—Պարսկաստանում ծխախոտի մոնապօլաու-
թեան իրաւունքը անցկանալ ընկերութեանը
յանձնելու հարցը, որպէս յայտնի է, արեւմտահեղ
խառնակութիւններ առաջացրեց Մէլեդում և Շի-
բազում «Times» լրագրիւր հաղորդում է, որ ան-
դրական մենապօլաութեան զէմ եղած շարժու-
ւթ մեծ չափեր է առնում: Հոգեւորականութեան
դուրսը Գերբէլում արդեւ մասնականներին
ծխել և հրամայեց նրանց կոտորել իրանց ծխա-
փողիւրը:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Խաղաղական մի լրագրի հրատարակիչ խնդրում
էր հռչակաւոր կոմպոզիտոր Վէրդիից մի որ և է
գրուած իր հրատարակութեան համար: Լրագրի
հրատարակիչը հետեւալ պատասխանն ստացաւ.
«Նամակով. «Սերբիկ Ռեպուկ», և չունեմ որ և է
անտպալ գրուած, և այդ պատճառով չեմ կարող
կատարել ձեր խնդրքը: Բայց որովհետեւ ձեր հը-
րատարակութիւնը խօսում է երկրագործութեան
մասին, որից ես ևս անմասն չեմ, թոյլ տուցեք
ինձ ցանկութիւն յայտնել, որ այդ աշխիւ գործով
առհասարակ աւելի ևս մեծ եռանդով զբաղվին
մարդիկ: Եթէ երկրագործութեամբ պարապելն մար-
դիկ, զա հարատւութեան ահագին աղբիւր կը լի-
նէ մեր խոտիլայի համար: Թող աւելի սակաւ
լինեն երաժիշտները, փաստաբանները, բժիշկները,
բայց թող շատ լինեն երկրագործները, — ահա թէ
ինչ եմ ցանկանում ես իմ հայրենիքին»:

—Բերլինի համալսարանի ուսանողների թիւը
ներկայումս հասնում է 5,371 խոշոր թիւին:

—Բերլինում կանգնեցնելու են Վիլհելմ I կայսրի
կնոջ, Ալզուստա կայսրուհու արձանը: Այդ նը-
պատակով հաւաքված գումարը ներկայումս հաս-
նում է 115,000 գերմանական մարկի:

«Lombardia» լրագրի խօսքերով, վատիկանի
պալատի նախահաշիւը 1892 թւի համար հետե-
ւեալ կերպով է կազմված: Եկամուտներ՝ հողեր
հարկերից, պատկաւորութիւններից և թանգարան-
ների մանողներից առնվող վճարներից սպաս-
վում է 1,500,000 լիրա. ս. Պետրոսի լուծայից—
2,500,000 լիրա. դանազան եկամուտներ—100,000
լիրա, ընդամենը 41½ միլիոն լիրա. ծախսեր՝ կար-
դինալների ուսուցիչ—650,000 լիրա, պապի պալատի
ծախս—2 միլիոն լիրա, նպաստներ և թոշակներ—
1,500,000, արտասահմանի ներկայացուցչութիւնը
—100,000 լիրա, պապի անձնական ուսուցիչ—
300,000 լիրա, և այլ մի քանի ծախսեր, ընդա-
մենը 7½ միլիոն լիրա:

Ինչպէս յայտնի է վերջին ժամանակները թէ
Եւրօպայում և թէ Ամերիկայում սկսեցին լոյս
տեսնել բազմաթիւ գրուածներ, որոնք նկարա-
գրում են մարդկային հասարակութեան ապագայ
կազմակերպութիւնը, որը իբր թէ հիմնված կը
լինի սօցիալիստական հիմունքների վրա: Այդ
գրուածներից ամենաաշխիւ ընկնողն է Բեյլլամի
անգլիացու գրուած «2000-որդ տարում» վերնա-
գրով, որը թարգմանվեց և ուսուցին լեզուով և
տպվեց «Нечто» շաբաթաթերթի տեսարակնե-
րում: Այժմ սկսեցին երեւել Եւրօպայում գրուած-
ներ և հակառակ ուղղութեան, գրուածներ, ո-
րոնք ծագում են սօցիալիստների ցնորքերը և
ցոյց են տալիս նրանց գաղափարների անգործ-
նական, անիրագործելի և անհիմք լինելը: Այդ
տեսակ գրուածներից ամենից շատ իր վրա ու-
շադրութիւն դարձրեց գերմանական ազատամիտ
կուսակցութեան պարագլուխ Էմիլ Բիխտերի այս
օրերս հրատարակված գրուածը «Socialdemo-
katische Zukunftsbilder» վերնագրով: Դա մի
շատ սրամիտ երգիծաբանական պամֆլետ է սո-
ցիալիստների ցնորքերի զէմ: Բիխտերի գրեղնը
հաւաքին աղմուկ հանեց ոչ թէ միայն Գերմա-
նիայում, բայց և ամբողջ Եւրօպայում և կարճ
ժամանակում ծախվեց 140,000 օրինակի քանա-
կութեամբ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍՈՒՆ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 10 դեկտեմբերի: Ֆրանս-բուլղա-
րական ընդհարման առիթով «Journal de St-
Petersbourg» յայտնում է, որ բուլղարական կա-
ռավարութիւնը միանգամայն չէ զիմել Ֆրան-
սիական դիպլոմատիական գործակալին, նախ
քան «Հալասի» գործակալութեան թղթակցի ար-
տաքսելը: Իսկ դա դաշնադրութեան ուղղակի
խախտումն է:

ՀԻՌՈՒ, 10 դեկտեմբերի: Մեծ Իշխան Պապիկ
Աւերսանդրովիչ այցելեց Թագաւորին և մարկիզ
դի Բուդիսկին. հետո և Աթէնք: Թագաւորը փո-
խադարձ այցելութեան դնաց Մեծ Իշխանի մօտ:

ՊԱՐԻԶ, 10 դեկտեմբերի: Պատգամաւորների ժո-
ղով հաստատեց փոքրագոյն տարիքի նախագիծը,
որը մինիստրութիւնը յոյս ունի գործադրել Հոլան-
դիայի, Բելգիայի, Շվեյցարիայի և Դիլիդիայի, գուցէ
և Սլաւոնիայի վերաբերմամբ:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ

Լօնդոնի վրա	10 ֆունտ արծե . . .	101	15	Կ
Բերլինի վրա	100 մարկ — . . .	49	>	45
Պարիզի վրա	100 ֆրանկ — . . .	40	>	05
Ոսկի —	արծե . . .	8	>	12
Մաքսային կուպօններ	— . . .	163	>	—
Արծաթ —	— . . .	1	>	19
Բորսային դիվիդենդներ	— . . .	6½/2	>	80%
Պետ. բանկի 50/0 տոմս 1 շրջանի . . .	102	>	87	
— — — 2-րդ —	102	>	50	
— — — 3-րդ —	—	>	—	
— — — 4-րդ —	—	>	—	
— — — 5-րդ —	—	>	—	
— — — 6-րդ —	102	>	25	
60/0 ոսկեայ բէնտա	167	>	—	
40/0 ոսկեայ փոխառութիւն	—	>	—	
Արեւելեան 50/0 փոխառ. 1-ին շրջ. . .	—	>	—	
— — — 2-րդ —	102	>	50	
— — — 3-րդ —	103	>	—	
Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	239	>	75	
— — — երկրորդ —	220	>	50	
Պետական. երկաթուղային բէնտա. . .	103	>	—	
5½/2 բէնտա	—	>	—	
40/0 ներքին փոխառութեան . . .	95	>	25	
50/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	100	>	75	
Աղն. կալ. բանկի խաղաղութեան				
գրաւ. թղթ.	199	>	—	
5½/2 փոխառ. գիւղ. հող. բանկի. . .	104	>	75	
4½/2 փոխառ. թղթեր կալուած.	—	>	—	
փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. . .	153	>	—	
— — — թղթադ. . .	101	>	25	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.				
ընկերութեան օբլիգացիաներ. . .	101	>	—	
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ. . .	100	>	50	
Օրէսայի	101	>	50	
Թիֆլիսի	—	>	—	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. .	—	>	—	
— — փոխթալիսի — . . .	—	>	—	
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւն				
խաղաղ է:				

სტატუსი

სტატუსი

სტატუსი

№ 1

სტატუსი

№ 2

სტატუსი

სტატუსი

№ 3

სტატუსი

სტატუსი

№ 4

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი



სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი


Various advertisements for perfumes and cosmetics, including 'Виктория', 'Рояль', and 'Иксорнакс'.

სტატუსი

სტატუსი

სტატუსი

სტატუსი



სტატუსი

სტატუსი

Advertisement for 'Ольга' brand soap, featuring an illustration of a soap box.

სტატუსი